ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անունը, ազգանունը.
Գևորգ Լոռեցյան

Զբաղեցրած պաշտոնը.
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

Գործուղման վայրը և ժամկետները.
Բրյուսել, Բելգիայի Թագավորություն, 09.09.2019-11.09.2019

Հրավիրող կողմը.
Եվրոպայի Խորհուրդ

Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).
Գործուղման հիմնական նպատակը EPAS-ի (European Partial Agreement on Sport) կողմից կազմակերպված՝ «Եվրոպական սպորտային խարտիայի հնարավոր վերանայման» վերաբերյալ ու ԵՄ կողմից իրականացված «ALL IN. Դեպի սպորտում գենդերային հավասարություն» ծրագրի համաժողովներին մասնակցելն էր էր: ՀՀ-ն համարվում է EPAS-ի ղեկավար խորհրդի անդամ:

Քննարկված թեմաները.
Քննարկվել են ԵՄ կողմից իրականացված ծրագրի արդյունքները ու դրանց հետագա կիրառությունը տարածաշրջանի երկրներում, իսկ արդեն հիմնական քննարկման ժամանակ դիտարկվել է Եվրոպական սպորտային խարտիան վերանայելու հարցը: Վերջինս փոփոխության վերջին անգամ ենթարկվել է 2001 թվականին:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.
Հայաստանի Հանրապետության կողմից բարձրացվել է այն հարցը, որ նախքան նոր խարտիայի կամ որևէ այլ փաստաթղթի մշակումը իրականացվի կարիքի գնահատում ու ոլորտի տնտեսական գնահատում շահառու բոլոր պետություններում, այլ ոչ թե ԵՄ անդամ մի քանի զարգացած երկրներում արված ուսումնասիրությունը ուղղակի տարածվի մյուս երկրների վրա: Բացի այդ, բարձրացվել է լավ կառավարման (good governance) հարցը, մասնավորապես՝ միջազգային մարզական ֆեդերացիաների կողմից ճանաչում ունեցող, բայց ազգային մակարդակով գործունեություն չծավալող մարզաձևերի ֆեդերացիաների կառավարման արդյունավետության մասով:

Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Քննարկման ժամանակ որոշվել է կազմել նոր փաստաթուղթ՝ որում կլինեն հստակ առաջարկություններ խարտիայի վերանայման վերաբերյալ, ու այն կներկայացվի նախարարների կոմիտեի հերթական նիստի ժամանակ: Փաստաթղթի կազմման համար կպահանջվի 6-12 ամիս:

EPAS-ի քարտուղարության հետ նաև պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ վերջինս անհրաժեշտության դեպքում փորձագիտական խումբ կուղարկի ՀՀ՝ ուսումնասիրելու Եվրոպական սպորտային խարտիայի կատարման ներկա ընթացքն ու ոլորտի համապատասխանությունը դրված պահանջներին: Բացի այդ, քննարկմանը մասնակցող այլ պետությունների ներկայացուցիչների հետ քննարկվել է մի քանի ուղղություններով հնարավոր համագործակցության տարբերակները, մասնավորապես՝ Ալբանիայի ներկայացուցիչների հետ քննարկվել է ԵՄ աջակցությամբ ստեղծված սպորտային մենեջմենթի ուսուցման մագիստրոսական ծրագրի մասով փորձի հնարավոր փոխանակումը ՀՀ շահագրգիռ բուհերի և կառույցների հետ: Եվրոպական Օլիմպիական կոմիտեի ԵՄ գրասենյակի ղեկավարների հետ քննարկվել է մարզական կազմակերպությունների լավ կառավարման հիմնահարցը:

Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Վերոնշյալ առաջարկություններին ու պայմանավորվածություններին ընթացք տալու ձև է ընտրվել էլեկտրոնային փոստով նամակագրությունը:

ԵԽ-ն պատրաստ է խորհրդատվական առաքելությունն ուղարկելու հարցը քննարկել, հենց որ ՀՀ-ն համապատասխան նամակով կդիմի իրենց:

Հաշվի առնելով 2001-ից ի վեր սպորտի ու տեխնոլոգիաների առաջընթացը՝ սպորտային խարտիայի վերանայումը թույլ կտա ավելի հասցեական դարձնել տվյալ փաստաթուղթն ու համապատասխանեցնել այն ժամանակակից պահանջներին:

Ստորագրությունը, ամսաթիվը:

16.09.2019թ.